«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 563

ք. Երևան 15 օգոստոսի 2008թ.

Մասնակցեցին Ընկերության մասնակիցներ (սեփականատերեր) Վահագն Առաքելյանը և Գոռ Առաքելյանը (ընդամենը 100% մասնակցությամբ):

Օրակարգ

Քննարկել 11/08/2008թ. Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 559 արձանագրությամբ հաստատված Ընկերության անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանների և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգում փոփոխություններ կատարելու հարցը:

Ժողովի նախագահ ընտրվեց Վահագն Առաքելյանը, քարտուղար՝ Գոռ Առաքելյանը /միաձայն/:

Օրակարգի հարցի շուրջ Գ. Առաքելյանը ներկայացրեց Ընկերության կողմից մշակված անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն ու պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգում անհրաժեշտ փոփոխությունները և առաջարկեց վերահաստատել վերոհիշյալ կարգը:

Ժողովը ՈՐՈՇԵՑ՝

Վերահաստատել Ընկերության անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն ու պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը:

Ընկերության մասնակիցներ՝

Վահագն Առաքելյան _____

Գոռ Առաքելյան _____

Հաստատված է

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության

մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի

15/08/2008թ. թիվ 563 արձանագրությամբ

տնօրեն _____ Գ. Առաքելյան

Կ. Տ.

Կազմված է 2 օրինակից

օրինակ 1

«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ

Անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններ և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգ

Երևան 2008թ.

Սույնով սահմանվում են «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից թողարկվող 5’000 (Հինգ հազար) հատ 50’000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն ու պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը:

Սույն պայմանները մշակված են ՀՀ օրենսդրությանը և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

1. Պարտատոմսերի թողարկման պայմանները

1.1 Թողարկվող պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսեր են:

1.2 Պարտատոմսերը երաշխավորված են Ընկերության 90.00%-ի սեփականատեր հանդիսացող Վահագն Առաքելյանի կողմից:

1.3 Պարտատոմսերի անվանական արժեքի ընդհանուր ծավալը կազմում է 250’000’000 (Երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, քանակը՝ 5’000 (Հինգ հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 50’000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ է:

1.4 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 12 ամիս է՝ ազատ շրջանառությամբ:

1.5 Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 11.00%:

1.6 Թողարկվող պարտատոմսերը ապահովված են Ընկերության ընդհանուր գույքով և այլ ակտիվներով:

1.7 Պարտատոմսերը կարող են ձեռք բերել իրավաբանական և ֆիզիկական անձինք:

1.8 Թողարկողը պարատատոմսի արժեկտրոնային եկամտի վճարումը կատարում է թողարկման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան արժեկտրոնային եկամտի մարման 6-րդ աշխատանքային օրը:

1.9 Պարտատոմսը մարվում է թողարկման օրվան հաջորդող 12-րդ ամսվա համապատասխան օրը՝ անվանական արժեքով:

1.10 Պարտատոմսերի ձեռքբերմամբ դրա սեփականատերը ստանձնում է հետևյալ իրավունքները և պարտականությունները.

1.10.1 Պարտատոմսերի սեփականատերն իրավունք ունի պարտատոմսով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից:

1.10.2 Պարտատոմսերի սեփականատերն իրավունք ունի սույն պայմաններով նշված կարգով ու ժամկետներում ստանալ պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև պարտատոմսի մարումից գոյացած գումարը: Չվճարման դեպքում պարտատոմսերի

սեփականատերը իրավունք ունի Ընկերությունից, այնուհետև Երաշխավորից պահանջել վճարվելիք գումարը, իսկ պահանջը չբավարարելու դեպքում՝ դիմել դատարան:

1.10.3 Պարտատոմսերի սեփականատերն իրավունք ունի չմասնակցել Ընկերության կողմից հայտարարված պարտատոմսերի հետգնմանը:

1.10.4 Պարտատոմսերի սեփականատերն արժեթղթերի երկրորդային շուկայում իրավունք ունի իրականացնել պարտատոմսերով առուվաճառք միայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ ՀՖԲ)՝ Թողարկողի պարտատոմսերի՝ շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում:

1.10.5 Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը պարտատոմսի ձեռքբերման հայտ ներկայացնողը պարտավոր է ՀԿԴ-ում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:

1.10.6 Պարտատոմսերի սեփականատերը պարտավոր է մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում ունենալ դրամային հաշիվ:

1.10.7 Պարտատոմսերի սեփականատերը պարտավոր է կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

1.11 Պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ Ընկերությունը ստանձնում է հետևյալ իրավունքները և պարտականությունները.

1.11.1 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Ընկերությունն իրավունք ունի օգտագործել պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները՝ սույն պայմանների 1.13 կետով նշված նպատակների համար:

1.11.2 Ընկերությունն իրավունք ունի հետ գնել իր կողմից թողարկված պարտատոմսերը:

1.11.3 Ընկերությունը պարտավոր է սույն պայմաններով սահմանված ժամկետում կատարել պարտատոմսերի արժեկտրոնների վճարումը և մայր գումարի մարումը:

1.11.4 Ընկերությունը պարտավոր է ազդագրի տպագիր տարբերակը ներդրողի պահանջով տրամադրել նրան անվճար, ընդ որում, ոչ ուշ, քան նման պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ Ընկերության գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Դեղատան փ. 2) և ինտերնետային կայքից (www.tontoninvest.com):

1.11.5 Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով բացահայտել պարտատոմսերի ազդագրում ներառված տեղեկությունների փոփոխությունները:

1.11.6 Եթե Ընկերությունը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա Ընկերությունը ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել

բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով:

1.12 Ընկերությունը պարտատոմսերի թողարկման և ձեռք բերման որևէ սահմանափակում չի նախատեսում:

1.13 Պարտատոմսերի թողարկման նպատակը Ընկերության շրջանառու միջոցների համալրումն է:

1.14 Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը կիրականացվի ՀԿԴ-ի միջոցով՝ վերջինիս կանոններով սահմանված կարգով: Սակայն պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև լիցենզավորված պահառուի կողմից՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

1.15 Պարտատոմսերի դիմաց ստացված եկամուտը ֆիզիկական անձանց համար հարկվում է «Եկամտահարկի մասին», իսկ իրավաբանական անձանց համար՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2. Պարտատոմսերի տեղաբաշխումը

2.1 Պարտատոմսերը տեղաբաշխվում են հրապարակային եղանակով:

2.2 Պարտատոմսերը տեղաբաշխվում են մեկ տրանշով:

2.3 Պարտատոմսերի տեղաբաշխումը նախատեսվում է սկսել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումից հինգ աշխատանքային օր հետո և ավարտել տեղաբաշխման սկզբից 10-րդ աշխատանքային օրը:

2.4 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության կողմից:

2.5 Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{N}{1 + \frac{a * r/2}{b}} * \left[c * \sum_{j=1}^{m} \frac{1}{(1 + r/2)^{j-1}} + \frac{1}{(1 + r/2)^{m-1}} \right],$$

որտեղ՝

P - պարտատոմսի գնման գինը,

N - պարտատոմսի անվանական արժեքը,

a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը,

r - տարեկան եկամտաբերությունը,

b - տվյալ փուլի տևողությունը օրերով,

c - արժեկտրոնի կիսամյակային եկամտաբերությունը,

m - այդ պահին մնացած արժեկտրոնային վճարումների թիվը:

2.6 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է բաժանորդագրության եղանակով:

2.7 Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտատոմսերի ձեռքբերմամբ (ձեռքբերման հայտի ներկայացմամբ) տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:

3. Պարտատոմսերի շրջանառությունը

3.1 Նախատեսվում է պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխումից հետո թողարկվող պարտատոմսերը գրանցել և ցուցակել ՀՖԲ-ում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Երկրորդային շուկայում պարտատոմսերի շրջանառությունը (պարտատոմսերով գործարքների կատարումը) կիրականացվի ինչպես ՀՖԲ-ում՝ վերջինիս կանոններով սահմանված կարգով, այնպես էլ բորսայից դուրս՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտատոմսերի ձեռքբերմամբ տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:

3.4 Ընկերությունը իր կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելությունն ապահովելու նպատակով մտադրված է իր պարտատոմսերի համար ապահովել շուկա ստեղծողի գործառույթների իրականացում:

4. Պարտատոմսերի մարման սպասարկումը և արժեկտրոնների վճարումը

4.1 Պարտատոմսերը մարվում են թողարկման օրվան հաջորդող 12-րդ ամսվա համապատասխան օրը՝ անվանական արժեքով:

4.2 Պարտատոմսերը մարվում են ՀՀ դրամով:

4.3 Պարտատոմսերի մարման գումարը վճարվում է 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը ՀԿԴ-ի կողմից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 6-րդ աշխատանքային օրը:

4.4 Պարտատոմսերի մարման գումարը փոխանցվում է ՀԿԴ-ի կողմից տրամադրված ցուցակում ներառված անձանց բանկային հաշիվներին:

4.5 Ընկերությունը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը թողարկման նպատակով բացված հատուկ հաշիվը սպասարկող բանկում (այսուհետ՝ Բանկ) կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

4.6 Ընկերությունը պարտավորվում է 4.3 կետում նշված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

4.7 Պարտատոմսերով նախատեսվում է կիսամյակային պարբերականությամբ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսի անվանական արժեքի 5.50%-ի չափով:

4.8 Ընկերությունը պարատատոմսերի արժեկտրոնների վճարումը կատարում է թողարկման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը ՀԿԴ-ի կողմից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան արժեկտրոնային եկամտի մարման 6-րդ աշխատանքային օրը:

4.9 Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը փոխանցվում է ՀԿԴ-ի կողմից տրամադրված ցուցակում ներառված անձանց բանկային հաշիվներին:

4.10 Ընկերությունը մինչև 4.8 կետում նշված օրերը պարտավորվում է Բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

4.11 Ընկերությունը մինչև 4.8 կետում նշված օրերին հաջորդող օրվա ընթացքում Բանկ է փոխանցում արժեկտրոններ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:

4.12 Ընկերությունը պարտավորվում է 4.8 կետում նշված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.10%-ի չափով տույժ:

4.13 Ընկերությունը կիրականացնի պարտատոմսերի դիմաց ստացվող արժեկտրոններից հարկային պահումները՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

5. Պարտատոմսերի հետգնման կարգը

5.1 Ընկերությունը կարող է հետ գնել իր կողմից թողարկված պարտատոմսերը: Այս դեպքում տեղի է ունենում պարտատոմսերի վաղաժամկետ մարում: Ընկերության կողմից հետ գնված պարտատոմսերը հաշվառվում են թողարկողի անձնական հաշվում:

5.2 Պարտատոմսերի հետգնմանը կարող են մասնակցել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:

5.3 Ընկերությունը պարտավոր է հետգնման օրվանից առնվազն երեք օր առաջ տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցներով իր պարտատոմսերի սեփականատերերին տրամադրել հետգնման կազմակերպման մասին տեղեկատվություն՝ նախապես հայտարարելով պարտատոմսերի այն եկամտաբերության մասին, որով պատրաստվում է հետ գնել պարտատոմսերը և այն ծավալի մասին, որը պատրաստվում է հետ գնել:

5.4 Հետգնման առարկա կարող են լինել միայն առանց որևէ սահմանափակումների (ազատ) պարտատոմսերը:

5.5 Հետգնմանը մասնակցելու համար հետգնմանը նախորդող երկու օրվա ընթացքում Ընկերությանը ներկայացվում են հետգնման հայտեր (կցվում է):

5.6 Հետգնման մասնակիցը նախքան հետգնմանը մասնակցելը պարտավոր է առնվազն մեկ աշխատանքային օր առաջ թողարկողի անձնական հաշվին փոխանցել պարտատոմսերը:

5.7 Թողարկողի անձնական հաշվին հետգնման հայտում նշված պարտատոմսերի անհրաժեշտ քանակի առկայության դեպքում Ընկերությունը բավարարում է հետգնման հայտը 5.11 և 5.12 կետերով սահմանված կարգով:

5.8 Ընկերությունը պարտատոմսերի հետգնման հայտը բավարարելուց հետո պարտավորվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսերի գումարը փոխանցել հետգնման մասնակցի համապատասխան բանկային հաշվին:

5.9 Ընկերությունը պարտավորվում է 5.8 կետում նշված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել վճարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

5.10 Հետգնման հայտերը Ընկերությանը ներկայացվում են հետևյալ կերպ.

- առձեռն՝ ներկայացնելով Ընկերության գտնվելու վայր (հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Դեղատան փ. 2),
- էլեկտրոնային փոստի միջոցով՝ info@tontoninvest.com,
- ֆաքսի միջոցով՝ (010) 54-54-77:

5.11 Ներկայացված հետգնման հայտերը բավարարվում են ըստ դրանց ներկայացման առաջնահերթության: Հետգնման հայտի մասնակի բավարարման դեպքում չբավարարված պարտատոմսերի քանակը վերադարձվում է հետգնման մասնակցի արժեթղթերի անձնական հաշվին մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5.12 Հետգնման ժամանակ մասնակի բավարարված հայտերը բաշխվում են համամասնության սկզբունքով:

5.13 Հետգնման ավարտից հետո Ընկերությունը նույն օրը տեղեկատվություն է տրամադրում պարտատոմսերի հետգնման արդյունքների վերաբերյալ:

6. Այլ դրույթներ

6.1 Սույն պայմաններով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, Ընկերության այլ որոշումներով կամ նրա կողմից կնքված պայմանագրերով:

ՀԵՏԳՆՄԱՆ
ՀԱՅՏ

«____» _____ 2008թ.

_____ պատրաստակամություն է հայտնում հետգնման
Ներդրողի անվանումը (անունը, ազգանունը)
աճուրդի ժամանակ վաճառել «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերը՝ _____ հատ _____ ընդհանուր անվանական արժեքով:
(նշվում է անվանական արժեքը թվերով)

Ներդրողի անվանումը (անունը, ազգանունը)	
Հասցե	
Հեռախոս	
Բանկային վավերապայմանները (անվանումը, հաշվի համարը)	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անվանումը	
Արժեթղթերի հաշվի համարը	
Ստորագրություն	
	Կ.Տ.